Տ. ԹԱԴԵՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՉԻՐԵԿՅԱՆՑԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(25 հուլիսի, 2022 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Ի սկզբանէ էր Բանն. եւ Բանն էր առ Աստուած.
եւ Աստուած էր Բանն»

(Յովհ. Ա. 1):

Բանն այն Բանն է, որ եկավ մեր մեջ բնակվեց եւ «յԻւրսն եկն, եւ Իւրքն զՆա ո՛չ ընկալան» (Յովհ. Ա. 12): Յուրայիները հրեաներն են, ովքեր «չընկալան» Աստվածորդուն, իսկ մենք էլ մեր միջից ծնեցինք առաջին քրիստոնյաներ, որոնք ընկալեցին եւ «Աստծու որդիներ» դարձան: Աստվածորդին, որ Ինքը Աստված է, հին աշխարհը չէր կարող ընդունել, որ Աստծու Որդին նաեւ Աստծու հետ համաժամանակյա-միաժամանակյա արարիչն է մեր՝ բոլորիս, այս աշխարհի: Եւ Հովհաննեսը արծվաթռիչք հայտարարեց, որ Բանը նույն Ինքն Աստված է, որ եկավ փրկելու մեզ մեր մեղքերից: Մենք մեկ անգամ եւս մեր մեղքերից փրկվելու առիթ ունեցանք: Միայն Հայ Եկեղեցին է այդ տոնը անվանում Պայծառակերպութեան Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի: Պայծառակերպության տոնը մյուս եկեղեցիները Այլակերպություն, Փոխակերպություն եւ այլ անվանումներով են հիշում, եւ միայն մեր եկեղեցին ունի Պայծառակերպության տոնը, որ Քրիստոս Իր երեք աշակերտների հետ ելավ Թաբոր լեռան վրա եւ պայծառակերպվեց ի տես եւ ի լուր ամենայն աշխարհի ներառյալ մեռյալի եւ ոչ մեռյալի: Բայց եւ զգուշացրեց Հիսուս աշակերտներին՝ չբացե՛ք գաղտնիքը՝ Մեսիական Փրկչական գաղտնիքը, մինչեւ Իմ Հարությունը: Եւ այս պայծառակերպությունը մեզ հիշեցնում է Քրիստոսի Երկրորդ Գալստյան բարի լուրը: Երկրորդ Գալուստը լինելու է արդար դատաստանով, սակայն մենք գիտենք, սիրելի՛ հավատացյալներ, որ դատաստանը փոխված է Նոր Ուխտով: Մեր շարականագիրն ասում է. «Ար-

դարութեամբ մի՛ դատեսցին այլ գթութեամբ Քո քաւեսցին» (Երգ Տեառն Ներսիսի՝ Վասն եօթներորդի աւուր արարչութեանն եւ վասն եօթներորդի դարուն եւ ի խորհուրդ հանգստեանն)։ Այսինքն արդարությամբ թող չդատի, այլ Իր գթով, գթառատությամբ թող քավի։ Այսօր ննջեցյալների տոնն է՝ տոն ուրախության, որովհետեւ ննջեցյալները նույնպես՝ մեզ հետ եւ միասին մասնակից են դառնում Քրիստոսի հրաշափառ Պայծառակերպությանը։ «Յուղի արկանելով» մենք՝ հուղարկավորել ենք մեր ննջեցյալներին դեպի Կյանք, դեպի նոր հարաբերություններ, դեպի Հարություն, եւ մենք այսօր վկայակոչում ենք նրանց հիշատակը ուրախությամբ եւ ցնծությամբ, որովհետեւ նրանք մեզ հետ են։ Մենք չենք թողնում, որ նրանք միայնակ մնան, մենք նրանց միացնում ենք մեզ եւ աղերսում ենք առ Միածին Որդին, որ հարություն պարգեւի նրանց այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից ամեն։